Աղքատության հաղթահարման, զբաղվածության և աշխատանքային իրավունքների պաշտպանության բարելավման

Քաղաքականության թերթիկ

Սույն քաղաքականության թերթիկը գրվել է «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության» ծրագրի շրջանակում, որն իրականացնում են ՕքսԵՋեն հիմնադրամը, «Սոցիոսկոպ», ««Ասպարեզ» լրագրողների ակումբ», «Հայ առաջադեմ երիտասարդություն», «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ. Հայաստան» հասարակական կազմակերպությունները «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը:

Քաղաքականության թերթիկի բովանդակության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Քաղաքականության թերթիկում տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Եվրոպական միության և ծրագրում ընդգրկված մյուս կառույցների դիրքորոշումներին:

Սոցիոսկոպ ՀԿ, 2023

Բովանդակություն

Ներածություն **4**

Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքների փոխառնչությունները **8**

Առաջարկություններ **12**

Գրականություն **18**

Ներածություն

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք[1]»: Աշխատանքային մյուս իրավունքները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, որտեղ, ինչպես Սահմանադրության մեջ, ներառված են մարդու իրավունքների տարբեր կոնվենցիաներով, ԱՄԿ կոնվենցիաներով ամրագրված հիմնարար սկզբունքները: Դրանցով, մասնավորապես, ամրագրված են արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, հանգստի և ամենամյա արձակուրդի իրավունքը, անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը:

1 | ՀՀ Սահմանադրություն (2015). Հոդված 57. *Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները:*

«ՀՀ զբաղվածության մասին օրենքը» սահմանում է, որ զբաղվածության պետական քաղաքականության նպատակներից են արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևողական ապահովումը՝ որպես սոցիալական պաշտպանության քաղաքականության բաղադրիչ, ինչպես նաև սոցիալական համերաշխության նախապայման[2]: Ավելին՝ ՀՀ Կառավարության տարբեր տարիների ծրագրերի, զբաղվածության քաղաքականությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ոլորտը մշտապես համարվել է երկրի սոցիալ-տնտեսական կայունության ապահովման առաջնահերթ ուղղություններից մեկը: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի[3], ինչպես նաև զբաղվածության ոլորտի քաղաքականությունների կարևորագույն Համաձայն «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի ինչպես նաև զբաղվածության քաղաքականությունների կարևորագույն նպատակներից են մի կողմից, տնտեսության կայուն զարգացման համար անհրաժեշտ աշխատուժի ձևավորումը,

2 | ՀՀ օրենքը զբաղվածության մասին. ուժի մեջ է մտել 01.01.2014:

3 | ՀՀ օրենքը զբաղվածության մասին. վերցվել է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

մյուս կողմից՝ աշխատուժի առաջարկի ներուժային և արդյունավետ իրացման համար պայմանների ապահովումը[4]:

«Զբաղված», «զբաղվածություն» հասկացություններն ընկալումների մակարդակում բարեկեցության բնութագրիչ են (Lohmann, Ive, 2018): Սակայն տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ զբաղվածությունը միշտ չէ, որ ապահովում է մարդկանց բարեկեցությունը, և աշխարհում աղքատ բնակչության մեծ մասը զբաղված է, ինչը նշանակում է, որ նրանք աշխատում են իրենց կենսապայմաններն ապահովելու համար, սակայն չեն ստանում այնքան եկամուտ, որը կբավականացնի գոնե նվազագույն մակարդակում իրենց հիմնական կարիքները հոգալուն: Սա հիմնախնդիր է, որը բնորոշ է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներին: «Զբաղված աղքատներ» եզրույթը նոր է, քիչ է կիրառվում գրականության մեջ: «Աշխատող/զբաղված աղքատ» է այն մարդը, ով աշխատում է և աղքատ է:

Համաձայն ԱՄԿ տվյալների՝ միայն աշխատանք ունենալու պայմանը տնային տնտեսություններին չի պաշտպանում աղքատության ռիսկից (Սահակյան, Կարապետյան, 2021): Ավելին, նույն ԱՄԿ տվյալների համաձայն, զարգացող երկրներում աշխատողների/զբաղվածների երկու երրորդն ապրում է ծայրահեղ կամ միջին աղքատության պայմաններում (ԱՄԿ, 2017): 2018 թվականի տվյալներով՝ աշխարհում աշխատանք ունեցող անձանց 8%-ն ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում, իսկ աշխատանք ունենալու և աղքատության կրճատման հարաբերակցությունն ուղիղ չէ և դեռևս խնդրահարույց է (ԱՄԿ, 2019):

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ աղքատության վրա ազդող կարևորագույն գործոն է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ աղքատների մեծ մասը չի ունեցել/չունի աշխատանք, մինչդեռ ոչ աղքատների զգալի մասը զբաղված է եղել/զբաղված է որևէ տեսակի տնտեսական գործունեությամբ (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021):

4 | ՀՀ զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարություն. վերցվել է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/11/MAR45-9.pdf

Աղյուսակ 1. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2020 թ. (15-75 տարեկան բնակչություն) (տոկոսներով) (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021)

Տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակը	2020 թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	15-75 տարեկան աղքատների մեջ (%-ով)	15-75 տարեկան բնակչության մեջ (%-ով)
Ոչ ոք զբաղված չէ	1.7	26.8	9.5	9.0
Զբաղված է մեկ անդամ	0.8	20.0	17.9	22.8
Զբաղված է 2 անդամ	0.3	23.3	34.3	37.6
Զբաղված է 3 և ավելի անդամ	0.7	31.9	38.3	30.6
Ընդամենը	**0.7**	**25.5**	**100**	**100**

Վերոնշյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից տեսնում ենք, որ, այո՛, աշխատանք ունենալն ու զբաղվածությունն ազդում են աղքատ չլինելու վրա, սակայն նույնիսկ զբաղվածության պայմաններում շատերը շարունակում են լինել ծայրահեղ աղքատ, աղքատ:

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» ՀՀ Կառավարությունը որպես աղքատության հիմնական պատճառ նշում է գործազրկությունը, սակայն նաև արձանագրում է, որ ՀՀ-ում ծայրահեղ աղքատ է զբաղված բնակչության ավելի քան 1/5-ը, և աղքատ՝ զբաղված բնակչության 45-47%-ը (Սահակյան, Կարապետյան, 2021): Տարբեր կառավարություններ և հետազոտողներ, այդ թվում՝ հայաստանյան կառավարությունը, զբաղվածության խթանումն են տեսնում աղքատության և ծայրահեղ աղքատության հաղթահարման կարևոր նախապայմաններից մեկը. աղքատության վրա ազդող կարևորագույն գործոն է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Այս համատեքստում 2018 թվականի Թավշյա հեղափոխության հետևանքով իշխանության եկած նոր կառավարությունը, ի թիվս այլ հրամայականների, առաջնային անելիքների շարքում հայտարարեց աղքատության հաղթահարումը, ծայրահեղ աղքատության վերացումը, սոցիալական ապահովության և

սոցիալական պաշտպանվածության ամրապնդումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին արժանապատիվ աշխատավարձով ապահովումը, որը նրանց պետք է դարձներ երջանիկ և հպարտ:

Սույն քաղաքականության թերթիկն ամփոփում է 2023 թվականին «Սոցիոսկոպ» ՀԿ-ի կողմից Գեղարքունիքի և Շիրակի մարզերում իրականացված աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրության (Խալաթյան, Մարգարյան, 2023) արդյունքում վերհանված հիմնական խնդիրները, ինչպես նաև դրանց լուծմանն ու բարելավմանն ուղղված առաջարկությունները:

Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքների փոխառնչությունները

Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքների մասնակցային ուսումնասիրությունը Գեղարքունիքի և Շիրակի մարզերի օրինակով ցույց է տալիս, որ.

1 | Աշխատանքային իրավունքների խախտումները Հայաստանում ունեն շարունակական և համակարգային բնույթ՝ անկախ զբաղվածության բնագավառից: Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության խնդիրն էական ազդեցություն ունի մարդու հիմնարար իրավունքների վրա, քաղաքացիական և քաղաքական իրավունքների վրա:

2 | Զբաղվածության ոլորտում այս համայնքների ներկայացուցիչները շարունակում են բախվել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ աշխատանք փնտրելը և գտնելը, աշխատանքի ընդունվելու հավասար հնարավորություններ չունենալը, աշխատանքային պայմանների ոչ բավարար լինելը, խտրական պրակտիկանները, ինչպես նաև ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումները, մասնավորապես՝ նեպոտիզմը: Փոքր համայնքներում զբաղվածության հարցի կարգավորումը շարունակում է իրականացվել սոցիալական կապիտալի կիրառման պայմաններում:

3 | Զբաղվածության ոլորտի առաջնահերթ խնդիրներից են աշխատաշուկայում աշխատատեղերի սակավությունը և մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնելը, ինչպես նաև աշխատանքի մասին տեղեկության անհասանելիությունը: Կարևոր արձանագրումներից է նաև, որ Հայաստանում կրթական և զբաղվածության ոլորտները միմյանց չեն համապատասխանում. կան թափուր աշխատատեղեր, սակայն չկան այդ աշխատատեղերը լրացնելու համար համապատասխան մասնագետներ, և հակառակը՝ շատ մասնագետներ դուրս են մնում աշխատաշուկայից: Մյուս կողմից՝ բարձրագույն կրթությամբ մասնագիտությանը համարժեք աշխատանքի դիմաց մարդիկ ավելի ցածր են վարձատրվում՝ ի տարբերություն, օրինակ, սպասարկման ոլորտի աշխատակիցների, ինչն իր հետ բերում է լրացուցիչ սոցիալական խնդիրներ:

4 | Գյուղական և փոքր քաղաքային համայնքներում աշխատատեղերի սակավությունը, ցածր վարձատրությունը պատճառ են մայրաքաղաք կամ արտերկիր տեղափոխվելու՝ ավելի բարենպաստ, կրթությանն ու մասնագիտությանը համարժեք աշխատանք գտնելու ակնկալիքով:

5 | Աշխատանքային իրավունքների խնդիրները քննարկվում են աշխատանքային նպաստավոր պայմանների, գործատուների հետ հարաբերությունների, նրանց անբարեխղճության, աշխատավարձի վճարման ձգձգման հարցերի հետմիասին: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի պետության, գործատուի և քաղաքացու՝ զբաղվածության հարցում ընդհանուր աշխատանքային տեսլականի և համախմբվածության բացակայության հարցը:

6 | Թեև աղքատության վերին գծի հաշվարկով Հայաստանում աղքատ է բնակչության գրեթե կեսը (43,8%), աղքատության մասին հիմնականում տարածված է ներքնայնացված բացասական վերաբերմունք և աղքատ մարդուն սեփական աղքատության համար մեղադրելու երևույթը՝ չնայած խնդրի համակարգային լինելուն: Այսպիսի կարծիքները տարածված են ոչ միայն հետազոտության մասնակիցների խոսույթներում: Նման հայտարարություններ անում են նաև տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ և պնդում, որ աղքատության հաղթահարման,

բարեկեցության ապահովման առաջնային պայմանը սեփական ջանքն է:

7 | Կա ընդգծված բացասական վերաբերմունք աղքատության հաղթահարման նպատակով իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի, այդ ծրագրերի շահառու խմբերի հանդեպ: Հետազոտության մասնակիցների գնահատմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը, ըստ էության, չեն ծառայում իրենց նպատակին՝ աղքատության վերացմանը, այլ ընդհակառակը՝ խորացնում են աղքատությունը, ինչպես նաև մարդկանց դարձնում են կախյալ համակարգից, ինչը խոչընդոտում է, որ վերջիններս ներդնեն իրենց անհատական ջանքերը և դուրս գան աղքատության շղթայից:

8 | Աղքատության մասին թվային չափումներով խոսելը, սակայն, երևույթի, աղքատ ապրող մարդկանց կենսակերպի մասին շատ քիչ բան է ասում: Աղքատության հիմնախնդրի դեմ պայքարի համար անհրաժեշտ է, որ այն բազմաշերտ ուսումնասիրվի: Զբաղվածությունից զատ՝ աղքատությունն անմիջապես առնչվում է կրթության, առողջապահության, հանրային ծառայությունների ոլորտների հետ, որոնք պայմանավորում են բազմաչափ աղքատությունը: Հենց այս ոլորտներում ներդրումներն են, որ պետք է նպաստեն աղքատության կրճատմանը և ծայրահեղ աղքատության վերացմանը:

9 | Կրթության պակասը, կոնկրետ ոլորտներում գիտելիքի և հմտությունների բացակայությունը, ֆինանսական անգրագիտությունը, բյուջեի տնօրինման հմտությունների պակասը աղքատությանը նպաստող գործոններ են: Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է ներդրումներ անել կրթական ոլորտում, այնպես կազմակերպել կրթությունը, որ այն համապատասխանի մարդկանց կարողություններին և նպաստի իրական զբաղվածությանը:

10 | Աշխատանք ունենալը, կայուն զբաղվածությունը միշտ չէ, որ նպաստում են աղքատության հաղթահարմանը: «Զբաղված աղքատության» հնարավոր պատճառներ են աշխատավարձի, նվազագույն աշխատավարձի ցածր լինելը, համայնքների ան-

համաչափ զարգացումը, ընտանիքում անչափահաս կամ հաշ-մանդամություն ունեցող անդամի առկայությունը, բազմազավակ ընտանիքները, չգրանցված աշխատող լինելը, գյուղատնտեսա-կան գործունեությամբ զբաղվելը, ֆինանսական անգրագիտու-թյունը, ալկոհոլից, թմրանյութերից, խաղերից կախվածությունը և այլն:

11 | Սոցիալ-տնտեսական դրությունն անմիջականորեն կապվում է բարեկեցության երևույթի սահմանման և ընկալման հետ, որը թեև հիմնարար, սակայն ոչ բավարար պահանջ է: Մարդկանց կենսա-պայմանները, կյանքի կազմակերպման համայնքային առանձ-նահատկությունները, ապահովության և անվտանգության հար-ցերը ևս բարեկեցության կարևոր նախապայմաններ են:

Միայն զբաղվածության խնդրի կարգավորմամբ հնարավոր չէ ամ-բողջությամբ հաղթահարել աղքատությունն ու ծայրահեղ աղքա-տությունը: Քանի որ աշխատանքային աղքատությունը բավականին համալիր խնդիր է, ապա դրա հաղթահարման մոտեցումները ևս պետք է լինեն համընդգրկուն՝ ներառելով նաև հարակից ոլորտների կարգավորումը: Աղքատության հաղթահարման գործում ամենա-շատը տեսնում և կարևորում են հենց պետության դերը՝ հաշվի առ-նելով նաև այժմ պետության համար մարտահրավեր հանդիսացող հումանիտար և անվտանգային հարցերի առաջնահերթությունը: Պետության կողմից մշակվող քաղաքականությունների հիմքում պետք է ընկած լինեն համակողմանի ուսումնասիրություններ, որոնք մանրամասն կանդրադառնան աղքատության տեսանկյունից ամե-նախոցելի ոլորտներին, անձանց և կընդգրկեն կարգավորման մե-խանիզմների ընդլայնված սխեմաներ «զբաղված աղքատության» խնդրի հաղթահարման համար:

Առաջարկություններ

Աշխատանքային իրավունքների, աղքատության և զբաղվածության թեմաների շուրջ մեր իրականացրած հետազոտությունները թույլ են տալիս անել առաջարկություններ, ինչպես նաև ներկայացնել հետազոտության մասնակիցների առաջարկները, որոնք կնպաստեն վերը հասցեագրված խնդիրների կարգավորմանը: Առաջարկություններն ուղղված են Կառավարությանը՝ ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ֆինանսների նախարարության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, առողջապահության նախարարության, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի, առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և շահագրգիռ այլ կողմերի:

1 | Զբաղվածության և կրթության կապի անհամարժեքությունը այն հիմնարար խնդիրներից է, որը քննարկվում է ուսումնասիրության ընթացքում: Աշխատաշուկայում աշխատատեղերի սակավությունը և մասնագիտությամբ աշխատանք գտնելը լուրջ մարտահրավեր են, որին Հայաստանում բախվում են շատերը, մասնավորապես՝ գյուղական և փոքր քաղաքային համայնքների բնակիչները: Որոշ համայնքներում տվյալ համայնքի առանձնահատկություն հանդիսացող զբաղվածության ոլորտում աշխատողների ներգրավվածությունը թույլ չի տալիս (օրինակ՝ Նորատուս համայնքում ձկնորսությունը) այլ մասնագետների պահանջարկի պարագայում համապատասխան որակավորում ունեցող թեկնածուների գտնել: Նաև պետք է հաշվի առնել, որ կրթություն ստանալուց հետո շատ մասնագետներ, մասնավորապես՝ գյուղերում և փոքր քաղաքային համայնքներում, բախվում են աշխատաշուկայում թափուր հաստիքների մասին տե-

ղեկության անհասանելիության խնդրին, որի հետևանքով դուրս են մնում աշխատաշուկայից, կամ բարդանում է աշխատաշուկա նրանց մուտքը:

Այսպիսով, հաշվի առնելով նաև հետազոտության մասնակիցների հետ քննարկումները, առաջարկում ենք.

Իրականացնել աշխատաշուկայի մանրակրկիտ ուսումնասիրություն, աշխատաշուկայի պահանջների հավաքում, հնարավոր թափուր աշխատատեղերի ու ոլորտների ամրագրում:

Քարտեզագրել հանրապետությունում, մասնավորապես՝ մարզերում, առկա մասնագիտական ռեսուրսները և աշխատաշուկան՝ դրանք հնարավորինս համապատասխանեցնելու համար:

Ունենալ աշխատատեղերի համընդհանուր հարթակ, բարձրացնել դրա մասին հանրության իրազեկվածությունը՝ օգտագործելով նաև Միասնական սոցիալական ծառայության ռեսուրսներն ու հնարավորությունները՝ ապահովելու հարթակի հասանելիություն և մատչելիություն հանրային լայն խմբերի համար, ինչպես նաև աշխարհագրական լայն ընդգրկվածություն:

2 | Հայաստանում բազմաթիվ համայնքներ, հատկապես՝ փոքր քաղաքային կամ գյուղական, ունեն որոշակի առանձնահատկություններ, այդ թվում՝ տնտեսական, ինչը պայմանավորում է տվյալ համայնքին բնորոշ զբաղվածության ձևերը: Օրինակ՝ Նորատուս համայնքում զբաղվածության հիմնական տեսակը անմիջական առնչություն ունի ձկնորսության (ընդ որում՝ ձկնորսություն, ձկների մաքրում, ձկների լվացում, ձկների ապխտում և այլն), Արթիկում՝ քարի արտադրության կազմակերպման հետ: Գյուղական և փոքր քաղաքային համայնքներում ռեսուրսների ու ներդրումների ճիշտ կազմակերպումը՝ պետության և մասնավոր սեկտորի արդյունավետ համագործակցությամբ, կարող է իր նպաստն ունենալ թե՛ զբաղվածության հարցի կազմակերպման, թե՛ աղքատության նվազեցման, թե՛ բարեկեցության ապահովման և թե՛ համայնքային զարգացման համար:

Համապատասխան ջանքեր ներդնել համայնքների համաչափ զարգացման ուղղությամբ, որոնք ոչ միայն կբարձրացնեն այդ համայնքների գրավչությունը, այլև կնպաստեն դրանցում նոր աշխատա-

տեղերի ստեղծմանը, ենթակառուցվածքների կազմակերպմանը և բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Քարտեզագրել առկա չօգտագործվող ռեսուրսները, մասնավորապես՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, և կազմակերպել դրանց օգտագործման հարցն ըստ նշանակության՝ ի նպաստ համայնքային զարգացման:

Իրականացնել համապատասխան գործառույթներ՝ ապահովելու համայնքային առանձնահատկություններով պայմանավորված բարիքների ու ռեսուրսների ճիշտ տնօրինումը և կառավարումը, արտադրական ներուժի իրացումը (օրինակ՝ Սևանում ձկնագործական, Արթիկում քարամշակման արտադրության կազմակերպումը):

Իրականացնել զբաղվածության խթանման միջոցառումներ կոնկրետ ուղղություններով, օրինակ՝ մատչելի վարկավորում, սուբսիդիաների տրամադրում, գործարարների համար հարկային արտոնությունների սահմանում, որոնք կստեղծեն աշխատատեղեր, ինչն իր հերթին կդիտվի որպես կայունության, կայուն բարեկեցության ապահովման երաշխիք: Այստեղ կարևոր նախապայման է, որ վարկերի և արտոնությունների տրամադրմանը զուգահեռ պետությունը մշակի և ներկայացնի արտոնություններից օգտվող կազմակերպություններին և այլ միավորներին աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված հստակ պահանջներ:

3 | Աղքատության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների կարիքները հոգալու համար նախատեսված սոցիալական աջակցության ծրագրերի նկատմամբ հանրային քննադատություն կա: Դա պայմանավորված է տարիների ընթացքում նմանատիպ սոցիալական աջակցության ծրագրերի նկատմամբ կուտակված անվստահությամբ, հատկապես՝ թիրախային խմբերի ընտրության ու աջակցության տրամադրման հարցում, ինչպես նաև մարդկանց կախվածության մեջ դնելու հատկությամբ և աղքատության շղթայի անընդհատությամբ:

Վերանայել սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց շահառուներին:

Սոցիալական աջակցության ծրագրերով մատուցվող ծառայությունները համապատասխանեցնել մարդկանց կարիքներին և կարողություններին:

Բարձրացնել այդ ծրագրերի և ծառայությունների հասցեականությունը:

Վերասահմանել նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակի չափը, դրանք համապատասխանեցնել արժանապատիվ կյանք ունենալու անհրաժեշտ պահանջներին:

Իրականացնել համապարփակ ուսումնասիրություն և վերհանել այն բոլոր հանգամանքները, որոնք նպաստում են, որ մարդիկ շարունակեն մնալ սոցիալական աջակցության ծրագրերի շահառուներ:

Ներդնել առողջության համապարփակ ապահովագրության գործուն համակարգ, որը կնպաստի, որ սոցիալական աջակցության ծրագրերի շահառուները մոտիվացված չլինեն մնալու այդ ծրագրերում, ինչպես նաև կկանխարգելի առողջական խնդիրներով պայմանավորված աղքատացումը:

4 | Քանի որ զբաղված աղքատությունը համալիր խնդիր է, ապա դրա հաղթահարման մոտեցումները ևս պետք է լինեն համընդգրկուն: Այս քաղաքականությունների հիմքում պետք է ընկած լինեն համակողմանի ուսումնասիրություններ, որոն կսահմանեն, թե որո՞նք են աղքատության տեսանկյունից զբաղվածության ամենախոցելի ոլորտները, ո՞ր աշխատողներն են առավել խոցելի աղքատության տեսանկյունից, աղքատության զբաղվածության գենդերային, տարիքային, տարածաշրջանային և այլ բաղադրիչները: Աշխատանքային աղքատության գոյությունն արդեն իսկ քաղաքականություն մշակողներին և որոշում կայացնողներին պետք է դրդի մշակելու և ընդունելու այնպիսի ռազմավարություններ, որոնք նպաստում են արժանապատիվ աշխատանքին և որակյալ զբաղվածությանը բոլորի համար:

Մշակել զբաղված աղքատության խնդիրն առավել թիրախային և արդյունավետ հասցեագրելու համար համապատասխան հետազոտական գործիքներ՝ բարելավելու ոչ ստանդարտ զբաղվածության ըմբռնումն ու չափումը, հատկապես անկայուն զբաղվածության և, այսպես կոչված, զբաղվածության նոր ձևերի առնչությամբ: Համակողմանի վերլուծել ստացված տեղեկությունները, և քաղաքականությունները հիմնել հետազոտական տվյալների վրա:

Վերանայել և բարելավել զբաղվածության, աղքատության և հարակից ոլորտներում մշակվող և իրականացվող քաղաքականությունները՝ հասցեագրելու զբաղված աղքատների հիմնախնդիրները:

Ապահովել շարունակական կրթություն և վերապատրաստումներ աշխատողների, զբաղված աղքատների համար՝ հիմնված նրանց կարիքների և հնարավորությունների վրա:

Աշխատանքի, զբաղվածության, աղքատության և սոցիալական պաշտպանության քննարկումներում որպես խաչվող խնդիր ներդնել զբաղված աղքատության կամ աշխատանքային աղքատության հարցերը, կազմակերպել դրանց շուրջ հանրային քննարկումներ:

Գրականություն

1 | Խալաթյան, Մ., Մարգարյան, Ն. (2023). *Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն. Գեղարքունիքի և Շիրակի մարզերի օրինակ,* «Սոցիոսկոպ» ՀԿ, Երևան:

2 | Սահակյան, Մ., Կարապետյան, Լ. (2021). *Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում. Աշխատանք և սոցիալական արդարություն,* Երևան:

3 | ՀՀ վիճակագրական կոմիտե. (2021). Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020 թթ. վերցվել է՝ https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf

4 | Hick, R., Marx, I. (2022). *Poor Workers in Rich Democracies: On the Nature of In-Work Poverty and Its Relationship to Labour Market Policies.* Retrieved from https://docs.iza.org/dp15163.pdf

5 | ILO. (2019) *The working poor or how a job is no guarantee of decent living conditions.* Retrieved from: https://ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_696387.pdf

6 | ILO. (2017), *World Employment Social Outlook: trends 2017,* Retrieved from https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_541211.pdf

7 | Lohmann, H., & Marx, I. (2018). Handbook on In-Work Poverty. Retrieved from https://www.elgaronline.com/edcollbook/edcoll/9781784715625/9781784715625.xml